

ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՀԱՂԵՍՆԷՐԸ

Ի ՊԱՏԻ

ՄԻԽԹԱՐ ԱՐԲԱՆՈՐ ԵՒ ՎՍԵՄ ԳԵՐԵՐՁ ՀՈԳԵՒՈՐ ՏԻՐՈՋ

ՊԱՏՐԻԱՐԳՈՒԹԵԱՆ ՔՍԱՆԱՄԵԱԿԻՆ

ՄԻԽԹԱՐԻ ՇԻՐԻՄԻՆ ՎՐԱՅ

Ապրիլ 27: Տարեկան յիշատակ մահուան Երանաշնորհ Մխիթար Արքաճօր: Վսեմ. Գերեբ. Հոգեւոր Տէրը կը մատուցանէ հայրապետական սուրբ Պատարագը մեծ Սեբաստացիին խնկելի շիրիմին վրայ, անոր երջանիկ մահուան 209րդ տարեդարձին օրը:

Մեծ Թափօրը կը սկսի վանքի վերին յարկաբաժիններէն. շարականներով ու աղօթքով կը մտնէ եկեղեցի՝ ուր դպրաց դասը ծայր կու տայ բազմաձայն երգեցողութեան. հայ երգը, դաշն ու խորունկ, ապրումը ու տպաւորիչ, կը բարձրանայ Մխիթարաբերտ կամարներէն, խունկի եւ աղօթքի երկնաշու սլացքով: Ելլէր այդ օրը Մխիթար իր շիրիմէն ու տեսնէր այսպէս իր շուրջ հաւաքուած ազգ եւ ազգապետ, Ժողովուրդ եւ Հովուապետ, միաբան ու միախորհուրդ, հաւատքի անքակ շղթաներով զօդուած: Անշուշտ երկնքէն հրճուեցաւ Մխիթար, ու շնորհքի փափուկ անձրեւ մը տեղաց այս հոգեկան դարնան հետ՝ մեր տառապեալ ու վշտահար ազգին բոլոր բեկորներուն վրայ:

Ժողովուրդն ամբողջ յուզուած ու վերացած՝ կ'աղօթէ Հայրապետին հետ, վասն խաղաղութեան, ճշմարիտ խաղաղութեան աշխարհի, կը հայցէ սէր եւ միութիւն ազգիս Հայոց, մինչ Քրիստոս պատարագեալ բաշխի ի միջի մերում, եւ հրեշտակներն իջած կը նուազեն հոգեպարար՝ Փառք ի բարձունս կերակրողիդ ըզմեղ: Հայրապետին խունկը կը ծաւալի մեր շուրջ, անոր օրհնութիւնը կ'իջնէ մեր

վրայ իրրեւ մանանայ երկնային. հոգեկան յուզումը կը պոռթկայ սրտէ սիրտ, բեմէն մինչեւ ատեան ու գաւիթ:

Ս. Ղազարի մէջ մեծ տօն է այսօր. հայ սուրբերը բոլոր, Լուսաւորիչ ու Սահակ, Նարեկացի ու Շնորհալի երկիր են իջած եւ իրենց խորաններէն կը ակունկ լոյս, վը ակունկ շնորհք երկնային:

Յաւարտ սուրբ Պատարագին Ժողովուրդը խոռոնեցած կը դիմէ Հոգեւոր Տիրոջ Աջահամբոյրի. եւ նա ունի ամէնուն համար սիրոյ Ժպիտ մը, ամէնուն համար հայրական անոյշ խօսք մը, որոնք պարտէզին մէջ ծաղկած Մայիսեան վարդերուն հետ հրաշալի ներդաշնակութիւն մը կը ստեղծեն մեր հոգիներուն մէջ:

ՅԻՇԱՏԱԿԻ ՀԱՆԴԵՍ

Ապրիլ 28ի առաւօտեան, վանքի մեծ դրաղարանի դահլիճին մէջ տեղի ունեցաւ յիշատակի դրական ու գեղարուեստական հանդէսը ի պատիւ Մխիթար Արքաճօր, վանքի աշակերտութեան կողմէ, մասնակցութեամբ Մուրադ-Ռափայէլեանի ուսանողներու:

Բացման խմբերդէն սկիզբ, Հ. Վահան Վրդ. Յովհաննէսեան բանախօսեց անըման ոգեւորութեամբ: Բանաստեղծական հմայքով ներկայացուց Մխիթարի լուսաւոր դիմագիծը եւ հոգին, բազմամեայ տառապանքներու եւ պրպտումներու ընդմէջէն՝ իրրեւ տեւական հետապնդում մը լոյսի խնկական աղբիւրին, մինչեւ կերտումը սրբութեան եւ դիտութեան այն փարոսին որ եղաւ Ս. Ղազար: Գծելով

դարուն տխուր պատկերը, վեր հանեց դարուն դիտականներէն իրաւասութեամբ Վարդապետի հրաշալի դէմքը, որ միակն էր զիտցած խորապէս գնահատել Մխիթար Արքաճօր ծրարին ու գործը. եւ բանախօսը յուզումով ողջունեց յանձին մեր Ծիրանաւոր Պատրիարքին՝ մերօրեայ իրաւասութեամբ Վարդապետը, հանդիսականներու բուն ծափերուն մէջ: Մխիթար ամբողջական նուիրում մըն էր, աւելցուց յարգելի բանախօսը, եւ ասոր ոգին էր Աստուածամօր Եղիցին՝ չքնաղ տեսիլքի մը մէջ յայտնուած. այդ նուիրումն էր որ տուաւ օտարութեան ու պանդխտութեան մէջ տոկալու ոյժը եւ սպասելու ի սպաս հեռաւոր հայրենիքին: Այդ հօր Եղիցին տակ կանգուն, Մխիթար ջամբեց լոյս, ջամբեց հաւատք, ջամբեց դիտութիւն: Մէկ ձեռքով սուրբ Աստուածաշունչը բռնած, միւսով խոսկայոյց Սորենացին, առաքինութեան եւ հայրենասիրութեան հեղեղ մը Թափեց Ազգիականի ակերուն: Ու շատեր քաղցին անոր լուսաւոր ուղիէն. անոր հոգին բազմապատկուեցաւ իր հետեւորդներուն մէջ, որոնք նոյն հաւատքով զործեցին, ստեղծելով այն հրաշալի վերածնունդը եւ տալով հարիւրաւոր վաստակաւորներ, որոնց վրայ հիացումով կը նային ամէնքը: Ու կը փակէր իր խօսքը հանդիսաւոր ուղերձով մը առ Մխիթար. Դուն մեծ եղար, որովհետեւ տառապանքով ելար, չարչարանքով դացիր. նոյն ճամբէն սիրով կ'երթանք մենք. չարչարանք մեզի համար փառք է, որովհետեւ դիտենք թէ յարութեան լեռը կը բարձրանանք:

Հանդէսը հիւսուած էր գեղարուեստական բաժինով, ուր արձագանդեց նոյնիսկ Մխիթար Արքաճօր ձայնը, իր իսկ յօրինած երգերուն մէջէն. Երանաշնորհ զմայլունքի եւ յափշտակութեան հառաչանք մըն է ուր Մխիթար դրած է իր սրտին ամենանուրբ լարերու թրթռացումները. Բգբեգ Ս. Հայր Անտոնիէն աղբրազին պաղատանք մըն է՝ վշտակոծ ու տառապած սրտի մը:

Արձակ եւ ոտանաւոր գրութիւններ եւ կան պատուելու նուիրական յիշատակը մեծ Սեբաստացիին՝ սրտազեղ խանդավառութեամբ:

Պր. Վարդան Վարդանեան ջուրակի վրայ նուազեց Կոմիտասեան եղանակներ, Գարուն ա, Ծիրանի ծառ, իր կողմէ երաժշտական զանազանակներով ճոխացած, ինչ ինչ տեղեր նոյնիսկ եռաձայն. նրբօրէն աշխատուած վերամշակումներ:

ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԳԵՐՊԾ. ԱՐԲԱՆՈՐԸ ԿԸ ԽՕՍԻ

« Յնձալից ուրախութեամբ կու գամ յանուն Մխիթարեան Միաբանութեան յայտնելու մեր խորին շնորհակալութիւնները եւ երախտագիտական դրացումները Ձերդ հայրական եւ բարեացակամ ներկայութեան, որով ուղեցիք պատուել մեծն Մխիթար Արքաճօր յիշատակը: Ձեր ներկայութիւնը, Հոգեւոր Տէր, անհուն ուրախութեամբ կը լեցնէ մեր սիրտն ու հոգին: Ներկայութիւն շնորհաբեր եւ առհաւատչեայ գրաւական Ձեր հայրական սիրոյն եւ համակրանքին:

« Վսեմաշուր Տէր, Ձեր այս այցելութիւնը գեղեցիկ առիթ մը կ'ընծայէ Մխիթարի գաւազներուն՝ որպէսզի կարենան յայտնել իրենց անխեղապահ սէրն ու նուիրումը, զոր կը տածեն Ձեր անձին հանդէպ. ներկայացնել միանգամայն իրենց ջերմագին շնորհաւորութիւնները եւ մաղթանքները Ձեր Պատրիարքութեան քանդակաւոր տարեդարձին առթիւ (ծափեր):

« Ս. Մարկոս իր աստիճանութեամբ եւ վենետիկի Ամենապատիւ Ծիրանաւորը իր բարութեամբ այս երջանիկ հնարաւորութիւնն ստեղծեցին մեզի, որուն համար անսահմանօրէն ուրախ եմ:

« Դիտաւորութիւնս չէ, Հոգեւոր Տէր, հոս թուել Ձեր Հայրապետութեան քսան տարիներու ընթացքին կատարած մեծամեծ գործերը, Ձեր շուրջը սփռած անբաւարարները, Ձեր կատարած շինարար դերը՝ Հայ Կաթողիկէ համայնքը օժտելով նոր եկեղեցիներով, դպրոցներով, կղերա-

նոցներով, նոր թեմերու հաստատու-
թեամբ եւ մամուլով: Դուք իբրեւ ճշմա-
րիտ Հովիւ քրիստոսական հօտին, խօսե-
ցաք տոհմային Հայրապետներու լեզուով
եւ շնչով, առաջնորդելով հայ ժողո-
վուրդը դէպի Աւետարանի լոյսը, դէպի
իրական երջանկութիւնը:

« Իմ եւ Մխիթարեան Միաբանութեան
ամենաջերմ մաղթանքն է, Հոգեւոր Տէր,
իդն ու փափաքը, որ իրականացած տես-
նէք՝ աշխարհի խաղաղութեան հետ՝
Քրիստոսի թաղաւորութեան ընդարձա-
կումը, Գրիգոր Լուսաւորչի գաւազանին
տակ հաւաքուած բովանդակ հայութիւնը:
Ձեզի հետ է, Հոգեւոր Տէր, Աստուծոյ
օրհնութիւնը, Ձեզի հետ է մեր աղօթքն
ու սիրտը, Ձեզի հետ է ապագան:

« Մինչ հոս հաւաքուած, սիրով եւ եր-
կնւածութեամբ կը տօնենք մեր երջան-
կայիշատակ Հիմնադիր մեծն Մխիթարի
առ Աստուած փոխման տարեդարձը, ո-

ղեկողելով իր անմահ յիշատակը, բերելով
մեր սիրոյ եւ երախտադիտութեան տրի-
տուրը, կը սփերանորոգենք մեր առաջա-
դրութիւնները՝ քալելու համար անոր
լուսաւոր ճանապարհէն եւ հետեւելու
հաւատարմօրէն իր կոտակին:

« Մեր մտածութիւնը, ստկայն, կ'եր-
թայ աւելի հեռուն, զինքը տեսնելու օր
մը խորաններու սրբութեան բարձրացած,
ոչ միայն իբրեւ խրախոյս եւ օրինակ իր
զաւակներուն, այլ նաեւ Աստուծոյ փառ-
քին տարածմանը, այլ նաեւ աղբակ մեր
աղբին միութեանը, որուն քարոզիչն ու
առաքեալը ձեզաւ (ծափեր):

« Երանի՜ թէ, Հոգեւոր Տէր, ոչ հե-
ռաւոր օր մը կրկնուէր երէկուան սքան-
չելի պատարաղը, այս անգամ ոչ միայն
իր շիրմին վրայ, այլ իր խորանին առջեւ,
եւ մեր Երանաշնորհ Հայրը երկնքի լոյսե-
րուն մէջէն օրհնէր զմեզ եւ հայ ժողո-
վուրդը:

ՀՈԳԵՒՈՐ ՏԷՐԸ ԿԸ ԴՐՈՒԱՏԷ ՄԵԾ ՍԵՐԱՍՏԱՑԻՆ

ՇՆՈՐՀԱԿԱՆՈՒ ԻՂՁԵՐ

Իրապէս դժուար է այս տեսակ հանդէսի մը առ-
քիւ խօսք առնել, ոչ թէ որովհետեւ գաղափար-
ները կը պակսին, այլ որովհետեւ անոնք հեղե-
ղաման կը յորդին: Բայց եւ այնպէս խօսք մը
կը խնդրուի Մեզմէ:

Առաջին խօսքը կ'ուղղեմ Ձեր Գերպոյ. Արքա-
հօր, շնորհակալութիւն յայտնելու այն արտա-
յայտութիւններուն համար՝ որ իր անկեղծ ու սի-
րավառ սրտէն կը բղխին, ուղղելով Մեր խոնարհ
անձին: Ստուգիւ այսօր հոս ոչ մէկ գովասանք
պէտք չէ որ լսուի, Մխիթար Արքաւոր գովասան-
քը ամէնուս սիրտը անսահման ուրախութեամբ,
հրճուանքով կը լեցնէ, որովհետեւ ամէնքին ալ
կը զգանք որ անոր հոգեւոր գաւազանքն ենք:
Հօր մը փառաբանութիւնը գովասանքն է, պար-
ծանքն է անոր գաւազանքին:

Բայց ես ալ փոխադարձաբար ունիմ իմ հայրա-
կան գնահատանքի խօսքը առ Գերպոյ. Արքաւոր-
քը՝ ինծի համար քաղաքացի Պատրիարքութիւն,
Գերապայծառն ալ ունի աւելի քան քաղաքացի
Արքայութիւն: Շինարար դեր կատարեց ան, հո-
գեպէս շինարար. առիկա սրտերու գաղտնիքն է.
բայց ոչ այնքան ալ գաղտնիք, որովհետեւ Մեզի

ծանօթ է այն խաղաղ մթնոլորտը որ կը տիրէ
վանքին մէջ, Միաբանութեան մէջ. անոր վկայ են
բոլոր Վարդապետները, հոս ներկայ եւ առաքե-
լութեանց մէջ ցրուած: Շինարար գործ՝ նաեւ ըզ-
գալի արտաքայտէս: անոր համար այլեւս սրտե-
րու խորը երթալու պէտք չկայ. արդարեւ ինծի
համար մեծագոյն հրճուանքը եղաւ հոս գալով
տեսնել կղզեակը կրկնապատկուած, այնքան գե-
ղեցիկ կերպով եւ այնքան գեղեցիկ հեռանկարներ
պարզելով մեր առջեւ: Հոգեպէս այս մեծ կղզին,
այժմ նիւթապէս ալ մեծցած, գրաւական մըն է
որ գործունէութիւնն ալ շատ աւելի պիտի ընդար-
ձակուի. պիտի ընդարձակուի, մեր մաղթանքն է,
ոչ միայն մեր հայութեան մէջ ի սփիւռս աշխար-
հի, այլ նաեւ մեր մայր Հայրենիքին մէջ, որ կը
բարգաւաճի, պիտի ըսեմ գիտական ամէն մարդի
մէջ, սակայն կարօտ է հոգեպէս. առիկա պիտի
կարենայ լեցնել Մխիթարի շունչը, եւ այն ատեն
է որ իրապէս հայ ժողովուրդը եւ հայ հայրենիք
պիտի կարենան ըլլալ արժանաւոր սերունդներ մեր
պանծալի նախնիներուն, որոնց համար հայրենի
գաւառը պէտք է որ միշտ մնայ աստուածատէր,
հայ ժողովուրդը միշտ քրիստոսատէր. ու այդ
հաւատքէն ոչ ոք պիտի կարենայ զմեզ խախտել,
ինչպէս գրած են մեր Հայրերը:

ԱՆՄՈՌԱՆԱԼԻ ՕՐԵՐ

Եւ այժմ, սիրելի գաւակներս, հանելի է Մեզի
կրկնել Մեր խորունկ գոհունակութիւնը այն բո-
լոր ստուգումներուն համար որոնց Մեք ալանա-
տես եղանակ այս քանի մը օրուան մէջ, հոս Մեր
բնակութեան ընթացքին:

Մեր հասնելուն յաջորդ օրը գացինք Ս. Մար-
կոս, հայութիւնը ներկայացուցինք ազգով ու ցե-
ղով, լեզուով ու ծէսով տարբեր ժողովուրդի մը
մէջ. եւ կատարեցինք պատուով ու պարծանքով,
առանց որեւէ բան պակսեցնելու մեր հայկական
ազգային աւանդութիւններէն. հայերէն խօսքն ալ
լսելի ըրինք Ս. Մարկոսի բնմէն. քերեսս առա-
ջին անգամն էր այդ:

Նոյն օրը ներկայ գտնուեցանք ձեր բովը, սի-
րելի գաւակներս, եւ ուրախութեամբ միասին ո-
գեկոչեցինք մեր պանծալի նահատակներուն յի-
շատակը. յուզուեցանք անշուշտ. ըսի որ յուզու-
մը հպարտանքի յուզում էր. եւ հրճուեցանք, սի-
րելի գաւակներս, որովհետեւ ձեր մէջը տեսանք
նորաբողոք սերունդը՝ որ կը հասնի նուիրումով
այդ գաղափարականներուն ո'չ միայն կերտումին,
այլ նաեւ նառագայթումին:

Ներկայ գտնուեցանք սուրբ Պատարագին, ան-
մահ սուրբ Պատարագին. հոն այլեւս բարձր ու
երկնային աշխարհ մը փոխադրուեցանք: Պարա-
գանքը այնպէս բերին, չեմ կարծեր որ ամէն
բան Մեք նախատեսած ըլլայինք, որ ճիշտ Մխի-
թար Արքաւոր մահուան, երջանիկ մահուան տա-
րեղարձին հետ գուցադիպէր: Եւ այնքան համ-
դիսաւոր երգեցողութիւն, սքանչելի ծիսակատա-
րութիւն, հիացում խելով օտարներէն իսկ, ո-
րոնք ներկայ էին:

ՄԽԻԹԱՐԻ ՊԱՏԿԵՐԸ

Բայց դժուար է ամէն բան քուել. պիտի ըսեմ
որ ես ալ ուխտաւորի մը նման եկած եմ. առա-
ջին անգամն է, բայց դարձեալ ուխտաւորի պէս
եկած եմ: Մխիթար Արքաւոր հանդէպ իմ զգա-
ցումներս շատ հեռաւոր տարիներէ ի վեր ծնունդ
առած են, երբ հագիւ հասած էի կիսասարկաւա-
գութեան, 20-21 տարեկան էի. երբ կարդացի Մը-
խիթար Արքաւոր վարքը, այնքան շնորհալի կեր-
պով, այնքան ապրում կերպով գրուած է. Յով-
հաննէս Թորոսեանի գրչով, որուն հանդէպ մեծ
յարգանք ունեցած եմ, որուն յիշատակը օրհնու-
թեամբ է իսկապէս, առաջին անգամն էր որ իմ
առջեւ կը պարզուէր Մխիթար Արքաւոր իսկա-
կան դէմքը. անոր գաղափարականին, որ իմ առ-
ջեւ կը դրուէր, խորունկները կը զգայի իմ մէ-
ջըս. բայց չէի գիտեր ձեւաւորել, կերպարել.
այդ ընթերցումը դրաւ իմ առջեւ անոր բանա-
ձեւումը սքանչելիօրէն: Եւ այն օրէն ի վեր, սի-
րելի գաւակներս, այդ զգացումները յարգանքի,

մեծարանքի, նուիրումի, հպատակութեան պիտի
ըսեմ, տարիներուն հետ միշտ աւելի ընդարձակ-
ուած են, միանգամայն ցաւ մը բերելով մեր սքը-
տին մէջ, վիշտ մը, իրական տառապանք մը, որ
կը յուզէ մեր սիրտը. վիշտը, տառապանքը, սի-
րելի գաւակներս, որ Մխիթար Արքաւոր չհաս-
կեցուեցաւ: Ի՞նչ պիտի ըլլար մեր վիճակը – քա-
ղաքական մարզէ դուրս, անոր մէջ մեր փոքրիկ
ազգին ոյժը գրեթէ աննշան է – ներքին աշխարհի
մէջ, հայկական ներքին աշխարհի մէջ, ուր մեք
տիրապետող կրնանք ըլլալ, ուր Հայը իր ճակա-
տագիրը կրնայ կերտել: Ի՞նչ եղած պիտի ըլլար
մեր վիճակը այսօր, 250 տարիներու ընթացքին,
երբ իսկապէս այդ լուսաւոր ուղիէն ընթացած
ըլլայինք: Թողունք նոյնիսկ ժողովուրդը. եթէ
Ս. Ղազարի վանքի նման քանի մը ուրիշ վանքեր
– եւ շատ աւելի կրնային ըլլալ. մեր Հ. Կարա-
պետ Ամատունի վրդ.ը վերջերս Հոռմի մէջ տը-
ւած բանախօսութեան մը ժամանակ կ'ըսէր՝ քե-
նից ենք շրջաններ երբ 2-000 վանքեր ունեցած
ենք մեք – եթէ 2-000ին մէջէն ըսեմ երկու հա-
րիւր, կամ նոյնիսկ քսան վանքեր ունեցած ըլլա-
յինք մեք՝ ներքին աշխարհի մէջ միայն կերտուինք,
այլ նաեւ նառագայթումին:

Ներկայ գտնուեցանք սուրբ Պատարագին, ան-
մահ սուրբ Պատարագին. հոն այլեւս բարձր ու
երկնային աշխարհ մը փոխադրուեցանք: Պարա-
գանքը այնպէս բերին, չեմ կարծեր որ ամէն
բան Մեք նախատեսած ըլլայինք, որ ճիշտ Մխի-
թար Արքաւոր մահուան, երջանիկ մահուան տա-
րեղարձին հետ գուցադիպէր: Եւ այնքան համ-
դիսաւոր երգեցողութիւն, սքանչելի ծիսակատա-
րութիւն, հիացում խելով օտարներէն իսկ, ո-
րոնք ներկայ էին:

Մխիթար Արքաւոր գործը Ս. Աստուածամօր
մէկ եղիծիով ստեղծուած է: Այդ եղիծին յարա-
տեւ կը կրկնուի. բաւ է գտնէ մեր մէջ այն գո-
հոգութեան, այն նուիրումին համապատասխան
ընթացքը, որով օժտուած էին Մխիթար Արքաւոր
եւ իր գաւակները այս երկու հարիւր տարիներու
ընթացքին:

Սիրելի գաւակներս, երբ կարդացի Մխիթար
Արքաւոր վարքը, իմ առջեւ պատկերացաւ անոր
հոգին իբրեւ մարմնացումը աւետարանական խօս-
քին. ան արդարեւ ներկայացաւ իբրեւ ապրումը
աստուածային այն պատգամին, որով մեր Տէրը
Յիսուս, փակելով իր մեծագոյն նախնիէն մէկը
կ'ըսէր. «Խնդրեցէ՛ք նախ զարգայութիւն Աստու-
ծոյ եւ զարդարութիւն նորա», եւ այդ ամենայն
յաւելցի ձեզ» (Մատթ. 23. 33):

ՄԽԻԹԱՐ ԱՐԿԱՆԱՅՐ ՍՈՒՐԲԻ ՏԻՊԱՐ

Սուրբը այն չէ, սիրելի գաւակներս, որ կ'ան-
տեսէ, կը ժխտէ ժամանակաւոր բարիքները, բը-

նոցներով, նոր թեմերու հաստատու-
թեամբ եւ մամուլով: Դուք իբրեւ ճշմա-
րիտ Հովիւ քրիստոսական հօտին, խօսե-
ցաք տոհմային Հայրապետներու լեզուով
եւ շնչով, առաջնորդելով հայ ժողո-
վուրդը դէպի Աւետարանի լոյսը, դէպի
իրական երջանկութիւնը:

« Իմ եւ Մխիթարեան Միաբանութեան
ամենաջերմ մաղթանքն է, Հոգեւոր Տէր,
իդն ու փափաքը, որ իրականացած տես-
նէք՝ աշխարհի խաղաղութեան հետ՝
Քրիստոսի թաղաւորութեան ընդարձա-
կումը, Գրիգոր Լուսաւորչի գաւազանին
տակ հաւաքուած բովանդակ հայութիւնը:
Ձեզի հետ է, Հոգեւոր Տէր, Աստուծոյ
օրհնութիւնը, Ձեզի հետ է մեր աղօթքն
ու սիրտը, Ձեզի հետ է ապագան:

« Մինչ հոս հաւաքուած, սիրով եւ եր-
կնւածութեամբ կը տօնենք մեր երջան-
կայիշատակ Հիմնադիր մեծն Մխիթարի
առ Աստուած փոխման տարեդարձը, ո-

ղեկողելով իր անմահ յիշատակը, բերելով
մեր սիրոյ եւ երախտադիտութեան տրի-
տուրը, կը սփերանորոգենք մեր առաջա-
դրութիւնները՝ քալելու համար անոր
լուսաւոր ճանապարհէն եւ հետեւելու
հաւատարմօրէն իր կոտակին:

« Մեր մտածութիւնը, ստկայն, կ'եր-
թայ աւելի հեռուն, զինքը տեսնելու օր
մը խորաններու սրբութեան բարձրացած,
ոչ միայն իբրեւ խրախոյս եւ օրինակ իր
զաւակներուն, այլ նաեւ Աստուծոյ փառ-
քին տարածմանը, այլ նաեւ ազդակ մեր
աղօթի միութեանը, որուն քարոզիչն ու
առաքեալը ձեզաւ (ծափեր):

« Երանի՜ թէ, Հոգեւոր Տէր, ոչ հե-
ռաւոր օր մը կրկնուէր երէկուան սքան-
չելի պատարաղը, այս անգամ ոչ միայն
իր շիրմին վրայ, այլ իր խորանին առջեւ,
եւ մեր Երանաշնորհ Հայրը երկնքի լոյսե-
րուն մէջէն օրհնէր զմեզ եւ հայ ժողո-
վուրդը:

ՀՈԳԵՒՈՐ ՏԷՐԸ ԿԸ ԴՐՈՒԱՏԷ ՄԵԾ ՍԵՐԱՍՏԱՑԻՆ

ՇՆՈՐՀԱԿԱՆՈՒ ԻՂՁԵՐ

Իրապէս դժուար է այս տեսակ հանդէսի մը առ-
քիւ խօսք առնել, ոչ թէ որովհետեւ գաղափար-
ները կը պակսին, այլ որովհետեւ անոնք հեղե-
ղանման կը յորդին: Բայց եւ այնպէս խօսք մը
կը խնդրուի Մեզմէ:

Առաջին խօսքը կ'ուղղեմ Ձեր Գերպոյ. Արքա-
հօր, շնորհակալութիւն յայտնելու այն արտա-
յայտութիւններուն համար՝ որ իր անկեղծ ու սի-
րավառ սրտէն կը բղխին, ուղղելով Մեր խոնարհ
անձին: Ստուգիւ այսօր հոս ոչ մէկ գովասանք
պէտք չէ որ լսուի, Մխիթար Արքաւոր գովասան-
քը ամէնուս սիրտը անսահման ուրախութեամբ,
հրճուանքով կը լեցնէ, որովհետեւ ամէնքին ալ
կը զգանք որ անոր հոգեւոր գաւազանքն ենք:
Հօր մը փառաբանութիւնը գովասանքն է, պար-
ծանքն է անոր գաւազանքին:

Բայց ես ալ փոխադարձաբար ունիմ իմ հայրա-
կան գնահատանքի խօսքը առ Գերպոյ. Արքաւոր-
քը՝ ինծի համար քաղաքացիական Պատրիարքութիւն,
Գերապայծառն ալ ունի աւելի քան քաղաքացիական
Արքայութիւն: Շինարար դեր կատարեց ան, հո-
գեպէս շինարար. առիկա սրտերու գաղտնիքն է.
բայց ոչ այնքան ալ գաղտնիք, որովհետեւ Մեզի

ծանօթ է այն խաղաղ մթնոլորտը որ կը տիրէ
վանքին մէջ, Միաբանութեան մէջ. անոր վկայ են
բոլոր Վարդապետները, հոս ներկայ եւ առաքե-
լութեանց մէջ ցրուած: Շինարար գործ՝ նաեւ ըզ-
գալի արտաքինապէս: անոր համար այլեւս սրտե-
րու խորը երթալու պէտք չկայ. արդարեւ ինծի
համար մեծագոյն հրճուանքը եղաւ հոս գալով
տեսնել կղզեակը կրկնապատկուած, այնքան գե-
ղեցիկ կերպով եւ այնքան գեղեցիկ հեռանկարներ
պարզելով մեր առջեւ: Հոգեպէս այս մեծ կղզին,
այժմ նիւթապէս ալ մեծցած, գրաւական մըն է
որ գործունէութիւնն ալ շատ աւելի պիտի ընդար-
ձակուի. պիտի ընդարձակուի, մեր մաղթանքն է,
ոչ միայն մեր հայութեան մէջ ի սփիւռս աշխար-
հի, այլ նաեւ մեր մայր Հայրենիքին մէջ, որ կը
բարգաւաճի, պիտի ըսեմ գիտական ամէն մարդի
մէջ, սակայն կարօտ է հոգեպէս. առիկա պիտի
կարենայ լեցնել Մխիթարի շունչը, եւ այն ատեն
է որ իրապէս հայ ժողովուրդը եւ հայ հայրենիք
պիտի կարենան ըլլալ արժանաւոր սերունդներ մեր
պանծալի նախնիներուն, որոնց համար հայրենի
գաւառը պէտք է որ միշտ մնայ աստուածասէր,
հայ ժողովուրդը միշտ քրիստոսասէր. ու այդ
հաւատքէն ոչ ոք պիտի կարենայ զմեզ խախտել,
ինչպէս գրած են մեր Հայրերը:

ԱՆՄՈՌԱՆԱԼԻ ՕՐԵՐ

Եւ այժմ, սիրելի գաւակներս, հանելի է Մեզի
կրկնել Մեր խորունկ գոհունակութիւնը այն բո-
լոր ստուգումներուն համար որոնց Մեք ալանա-
տես եղանք այս քանի մը օրուան մէջ, հոս Մեր
բնակութեան ընթացքին:

Մեր հասնելուն յաջորդ օրը գացինք Ս. Մար-
կոս, հայութիւնը ներկայացուցինք ազգով ու ցե-
ղով, լեզուով ու ծէսով տարբեր ժողովուրդի մը
մէջ. եւ կատարեցինք պատուով ու պարծանքով,
առանց որեւէ բան պակսեցնելու մեր հայկական
ազգային աւանդութիւններէն. հայերէն խօսքն ալ
լսելի ըրինք Ս. Մարկոսի բնմէն. քերեսս առա-
ջին անգամն էր այդ:

Նոյն օրը ներկայ գտնուեցանք ձեր բովը, սի-
րելի գաւակներս, եւ ուրախութեամբ միասին ո-
գեկոչեցինք մեր պանծալի նահատակներուն յի-
շատակը. յուզուեցանք անշուշտ. ըսի որ յուզու-
մը հպարտանքի յուզում էր. եւ հրճուեցանք, սի-
րելի գաւակներս, որովհետեւ ձեր մէջը տեսանք
նորաբողոք սերունդը՝ որ կը հասնի նուիրումով
այդ գաղափարականներուն ո՛չ միայն կերտումին,
այլ նաեւ նառագայթումին:

Ներկայ գտնուեցանք սուրբ Պատարագին, ան-
մահ սուրբ Պատարագին. հոն այլեւս բարձր ու
երկնային աշխարհ մը փոխադրուեցանք: Պարա-
գանքը այնպէս բերին, չեմ կարծեր որ ամէն
բան Մեք նախատեսած ըլլայինք, որ ճիշտ Մխի-
թար Արքաւոր մահուան, երջանիկ մահուան տա-
րեդարձին հետ գուցադիպէր: Եւ այնքան համ-
դիսաւոր երգեցողութիւն, սքանչելի ծիսակատա-
րութիւն, հիացում խելով օտարներէն իսկ, ո-
րոնք ներկայ էին:

ՄԽԻԹԱՐԻ ՊԱՏԿԵՐԸ

Բայց դժուար է ամէն բան քուել. պիտի ըսեմ
որ ես ալ ուխտաւորի մը նման եկած եմ. առա-
ջին անգամն է, բայց դարձեալ ուխտաւորի պէս
եկած եմ: Մխիթար Արքաւոր հանդէպ իմ զգա-
ցումներս շատ հեռաւոր տարիներէ ի վեր ծնունդ
առած են, երբ հագիւ հասած էի կիսասարկաւա-
գութեան, 20-21 տարեկան էի. երբ կարդացի Մե-
խիթար Արքաւոր վարքը, այնքան շնորհալի կեր-
պով, այնքան ապրում կերպով գրուած է. Յով-
հաննէս Թորոսեանի գրչով, որուն հանդէպ մեծ
յարգանք ունեցած եմ, որուն յիշատակը օրհնու-
թեամբ է իսկապէս, առաջին անգամն էր որ իմ
առջեւ կը պարզուէր Մխիթար Արքաւոր իսկա-
կան դէմքը. անոր գաղափարականին, որ իմ առ-
ջեւ կը դրուէր, խորունկները կը զգայի իմ մէ-
ջըս. բայց չէի գիտեր ձեւաւորել, կերպարել.
այդ ընթերցումը դրաւ իմ առջեւ անոր բանա-
ձեւումը սքանչելիօրէն: Եւ այն օրէն ի վեր, սի-
րելի գաւակներս, այդ զգացումները յարգանքի,

մեծարանքի, նուիրումի, հպատակութեան պիտի
ըսեմ, տարիներուն հետ միշտ աւելի ընդարձակ-
ուած են, միանգամայն ցաւ մը բերելով մեր սքը-
տին մէջ, վիշտ մը, իրական տառապանք մը, որ
կը յուզէ մեր սիրտը. վիշտը, տառապանքը, սի-
րելի գաւակներս, որ Մխիթար Արքաւոր չհաս-
կեցուեցաւ: Ի՞նչ պիտի ըլլար մեր վիճակը – քա-
ղաքական մարզէ դուրս, անոր մէջ մեր փոքրիկ
ազգին ոյժը գրեթէ աննշան է – ներքին աշխարհի
մէջ, հայկական ներքին աշխարհի մէջ, ուր մեք
տիրապետող կրնանք ըլլալ, ուր Հայը իր ճակա-
տագիրը կրնայ կերտել: Ի՞նչ եղած պիտի ըլլար
մեր վիճակը այսօր, 250 տարիներու ընթացքին,
երբ իսկապէս այդ լուսաւոր ուղիէն ընթացած
ըլլայինք: Թողունք նոյնիսկ ժողովուրդը. եթէ
Ս. Ղազարի վանքի նման քանի մը ուրիշ վանքեր
– եւ շատ աւելի կրնային ըլլալ. մեր Հ. Կարա-
պետ Ամատունի վրդ. ք վերջերս Հոռմի մէջ տը-
ւած բանախօսութեան մը ժամանակ կ'ըսէր՝ քէ
եղած են շրջաններ երբ 2-000 վանքեր ունեցած
ենք մեք – եթէ 2-000ին մէջէն ըսեմ երկու հա-
րիւր, կամ նոյնիսկ քսան վանքեր ունեցած ըլլա-
յինք մեք՝ ներքին տառապանքով Մխիթար Արքաւոր գա-
ղափարականէն, ընթացող անոր լուսագիծ շաւի-
ղէն, հայութեան համար ի՞նչ հարստութիւն, ի՞նչ
նոխտութիւն ամբարուած պիտի ըլլար:

Սիրելի գաւակներս, այս յուզումը, այս վիշտը,
այս տառապանքը, բացարձակապէս զմեզ ո՛չ ամ-
լուրծեան կը մատնէ, ո՛չ վիստառութեան. այլ կը
մղէ զմեզ, մանաւանդ այս ոգեկոչումով, նորո-
գելու մեր առաջադրութիւնները, հաւատարմօր
մը-
նալու, ինչպէս քիչ առաջ կ'ըսէր Գերպոյ. Արքա-
հայրը, Մխիթար Արքաւոր կոտակին, որ ամսահ
կտակ է:

Մխիթար Արքաւոր գործը Ս. Աստուածամօր
մէկ եղիծիով ստեղծուած է: Այդ եղիծին յարա-
տեւ կը կրկնուի. բաւ է գտնէ մեր մէջ այն գո-
հոգութեան, այն նուիրումին համապատասխան
ընթացքը, որով օժտուած էին Մխիթար Արքաւոր
եւ իր գաւակները այս երկու հարիւր տարիներու
ընթացքին:

Սիրելի գաւակներս, երբ կարդացի Մխիթար
Արքաւոր վարքը, իմ առջեւ պատկերացաւ անոր
հոգին իբրեւ մարմնացումը աւետարանական խօս-
քին. ան արդարեւ ներկայացաւ իբրեւ ապրումը
աստուածային այն պատգամին, որով մեր Տէրը
Յիսուս, փակելով իր մեծագոյն նախնիէն մէկը
կ'ըսէր. «Խնդրեցէ՛ք նախ զարգայութիւն Աստու-
ծոյ եւ զարդարութիւն նորա», եւ այդ ամենայն
յաւելցի ձեզ» (Մատթ. 23. 33):

ՄԽԻԹԱՐ ԱՐԿԱՆԱՅՐ ՍՈՒՐԲԻ ՏԻՊԱՐ

Սուրբը այն չէ, սիրելի գաւակներս, որ կ'ան-
տեսէ, կը ժխտէ ժամանակաւոր բարիքները, բը-

նական բարիքները, որոնց մեջ անտարակոյս — ժամանակակից կ'ըսեմ, բնական արժեքներ — մեծագոյնը հայրենիքն է, ներշնչարարն ա՛յնքան առաքինութիւններու: Սուրբը կը նուիրագործէ ա՛մէն ինչ. աւելի բարձր մակարդակի կը վերափոխէ. սուրբը այդ արժեքներուն մէջ կը դնէ աստիճանաւորում, ենթարկում: Սուրբին համար միակ բացարձակ բանը որ կայ՝ Աստուած է, Աստուած՝ ինչպէս որ մեզի յայտնուած է իր միածին Որդւոյն միջոցաւ, որ եկած է եւ իր մարդեղութեամբ ամէն ինչ տեսակ մը աստուածացումի կը տանի. նիւթը, մարմինը անգամ, այսօր, յանձին մեր աստուածային Փրկչին, աստուածային պատիւներու արժանացած է:

Այսպէս, սիրելի գաւակներս, Մխիթար Աբբա-հայր իրական սուրբ, տիպար սրբութեան, ամէն բանէ վեր սիրելով Աստուած, աստուածային Փրկչին եւ անոր ամենօրեան Մայրը, այս սիրոյն մէջ գտաւ գաղտնիքը տոկոսութեան եւ բեղմնաւորութեան, որով առաջ բերաւ գրական աշխարհի մէջ, հայրենասիրական մարզի մէջ այն բոլոր կոթողները՝ որոնք այսօր ո՛չ միայն Մխիթարեան Միաբանութեան, այլ հայութեան պարծանքն են: Սուրբը ա՛յս է: Սուրբը չի նշանակեր փակուիլ սոսկ ազօթքով. չի նշանակեր աշխարհէն խոյս տալ միայն. այլ կը նշանակէ ազօթքի մէջ կերտուիլ, բոցավառուիլ ներքին ասպարէզի մէջ, այդ աստուածային լոյսը հաղորդելու համար մեր շուրջը:

Օրհնեալ է անոր յիշատակը: Սիրով կը ձայնակցիմ Գերպոյ՝ Աբբաօր՝ թէ ամէնու բաղձանքն է, մաղթանքն է որ օր մը ոչ թէ գերեզմանին մէջ, այլ խորաններու վրայ բարձրացած տեսնենք Մխիթար Աբբահայրը, եւ անոր խորանին առջեւ կարենանք պատարագել. կը մաղթեմ որ ես ալ տեսնեմ, մենք ալ տեսնենք: Բայց մենք ներմակ ենք մօրուքով (ակնարկելով չուրջի տարեց վարդապետներուն), տարիք առած ենք. բայց դուք, սիրելի գաւակներս, տեսնեմք այդ երջանիկ օրը եւ մտքերնիդ բերեմք այսօրուան Աւետարանին խօսքը, որով կը փակեմ. «Նա էր մրազն որ լուցեալ էր եւ ծագէր» (Յովհ. Ե. 35): Մխիթար Աբբահայր Ս. Աստուածամօր Եղիշեով լուցուած վառուած մրազն էր, կը ծագէր, պիտի շարունակէ մառազայքել Ձեր միջոցաւ, Մեր միջոցաւ:

ԱՅՑՅԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՀԻՒՐԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Վսեմ. Հոգեւոր Տէրը, հանդէսներու առընթեր՝ կատարեց կարգ մը այցելութիւններ Վենետիկի մէջ եւ այլուր:

Ս. Մարկոսի դիմաց կը դառնուի Ս. Գէորգ կղզին՝ որ իններորդ դարէն մնացած Բենեդիկտեան վանք մըն է. Նախօրէնի դրաման շրջանին կիսով քանդուած ու վերածուած զինուորանոցի, այդ վիճակին մէջ կը հեծէր մինչեւ վերջերս: Պատերազմէն վերջ, մեծահարուստ Գոնթէ Չինի դնեց զայն, եւ հոն հաստատեց իր վաղամեռիկ զաւկին անունով Գիտական ու Մշակութային Հաստատութիւն մը. վանքը վերածեց իր նախկին սքանչելի վիճակին, մեծամեծ ծախսերով վերակազմեց պատմական դրաղարանը. հաստատեց տպարանական եւ արուեստանոցի բաժիններ, ծովային զինուորական պատրաստութեան դպրոց. հոսկ հրաւիրեց Փռալիայի Բենեդիկտեանները՝ նոր ճիւղ մը բանալու հին վանքին մէջ, տալով անոնց մեծամեծ նպաստներ: Մշակութային ընկերութիւնը կը գործէ տարեկան բանախօսութիւններով, ուր կը փայլին մեծամեծ գիտնականներ՝ մինչեւ հեռաւոր Ամերիկայի համալսարաններէն. կը սարքէ դասական թատերերգութիւններու ներկայացումներ, ուր կը հրաւիրուին նոյնիսկ Աթէնքի յունական խումբեր:

Ս. Գէորգ կղզին Ժ.Բ. եւ Ժ.Գ. դարերուն եղած է Վենետիկի Հայոց գերեզմանանոցը. դժբախտաբար կորսուած են կամ փճացած արձանագրութիւնները. մէկ հատ միայն փրկուած է ու տաճարին որմերէն մէկուն վրայ ադուցուած է ներկայիս:

Մշակութային Հաստատութիւնը բացառիկ պատիւներով հիւրասիրեց մեր Գերերջ. Վսեմ. Հոգեւոր Տէրը. իրենց Նախագահը եւ Վարչական բոլոր անդամները ներկայ էին, եւ մեծ ուրախութեամբ առաջնորդեցին Վսեմ. Հիւրը Հաստատութեան զանազան բաժիններուն մէջ: Կէսօրին պատուոյ ճաշ մըն ալ սարքած էին, որուն կը մասնակցէին նաեւ Վենետիկի Պատրիարքարանին փոխանորդ Եպիսկոպոսը, համբաւաւոր փաստաբան Քառնելութի, Ուխտիս Գերպոյ՝ Աբբահայրը եւ այլն...:

Ոսկեղէն էջ մը կազմեց այս այցելութիւնը նորակազմ Հաստատութեան պատմութեան մէջ. 26 Ապրիլ 1958:

Երկրորդ այցելութիւն մը կատարեց Փատմայի Ս. Անտոնի տաճարին (27 Ապրիլ), ուր մեր Գերերջ. Վսեմ. Հոգեւոր Տէրը գտաւ բազմահազար ժողովուրդին խանդավառ ընդունելութիւնը. քարոզեց եւ օրհնեց, հրաւիրելով ամէնուն վրայ երկնային շնորհներ եւ հոգեկան բիւր բարիքներ: Այդ առիթով ներկայ եղաւ բանախօսութեան մըն ալ զոր կատարեց Վենետիկի Ամենապատու Ծիր. Պատրիարքը՝ Լուրտի երեւոյններուն հարիւրամեակին առթիւ, որուն կը զուգէր Պիոս Ժ. սուրբ Քահանայապետին ծննդեան հարիւրամեակը:

Երկուշաբթի կէսօրին, Ապրիլ 28, ընտանեկան հիւրասիրութիւն մը տեղի ունեցաւ վանքին մէջ. կը մասնակցէին Վենետիկի Ծիր. Ամենապատու Պատրիարքը, Քաղաքապետը, Կուսակալը, Չինի Մշակութային Հաստատութեան Նախագահը՝ Նախկին քաղաքապետ Վենետիկի ինքն ալ, եկեղեցական, քաղաքական ու զինուորական ուրիշ ներկայացուցիչներ, մտերմիկ ու սիրալիկ պահեր անցընելով Ս. Ղազարու յարկին տակ, Հայ Վարդապետներու հիւրասէր ընկերութեան մէջ:

Երրորդ այցելութիւն մըն ալ կատարեց Գերերջ. Հոգեւոր Տէրը, արդէն իսկ մեկնելու ընթացքին, Վենետիկի նորաշէն փողը կղերանոցին, ուր ամբողջ աշակերտութիւնը եւ տեսչութիւնը հաւաքուած մեր Հոգեւոր Տիրոջ շուրջ, սիրալիկ ընդունելութեամբ, շնորհաբեր պահ մը անցուցին: Ներկայ էր նաեւ Վենետիկի Ծիր. Ամենապատու Պատրիարքը:

ՍՐՏԱՇԱՐԺ ՄԵԿՆՈՒՄ

Ու կը բացուի հիմա միւրջին տեսարանը Վենետիկի կայարանին մէջ. չորս օր առաջ հաւաքուած էինք հոն երազներու նա-

րօտով. ոսկեղէն արշալոյս մը ծաղկած էր մեր երեսին ու մեր սրտերուն մէջ. եւ ահա կը հասնի ժամն իրիկուան. բայց արշալոյսը որ բացուեցաւ ալ չի մարի, որովհետեւ երկնային շնորհներու հեղեղ մը բերաւ իր հետ, անմար ու յաւերժական:

Գարձեալ եկեղեցական ու քաղաքական անձնաւորութիւններ ու ներկայացուցիչներ իրարու ետեւէ կը մօտենան Հոգեւոր Տիրոջ՝ վերջին օրհնութիւնն առնելու. Մխիթարեան Միաբանութեան Գլխուն հետ՝ բազմաթիւ անդամներ, Մուրատ — Ռաֆայէլեան Վարժարանի աշակերտութիւնը ամբողջ եկած են ողջերթի. զըսպուած յուզում մը կը նշմարուի ամէնուն աչքերուն մէջ: Ու Գերերջ. Հոգեւոր Տէրը ունի ամէնուն համար դարձեալ Ժպիտ մը, սիրալիկ ու քաջալերական յորդոր մը, որ անջինջ պիտի մնայ մեր սրտին ու երեւակայութեան մէջ:

Հոգեկառքը կը սուլէ. կը շարժի. ոգեւորութիւնը կը պոթկայ խանդավառ ծափերով, մինչ հեռուէն հիմա կը նշմարենք միայն Հոգեւոր Տիրոջ Աջը, որ սրբապաշտ Կ'օրհնէ ամէնքը:

Կայարանէն դուրս գեղեցիկ արեւ մը, երեկոյեան ոսկի շառայներ դարձեալ կ'ոսկեզօծեն Վենետիկի լճակն ու Ս. Ղազարը՝ հարսի նման. բայց այլեւս նոր խորհուրդով մը ակադճուն, որ մեզի համար պատրանք մը չէ, այլ իսկական ապրուած կեանք մը, շնորհափայլ դիւթանք մը:

Ու դարձեալ կը հնչեն Ս. Ղազարու զանգերը. բայց այս անգամ խորհրդաւոր լուծեան մէջ իրիկուան, ուրիշ երգ մը ունին, երգ մը հանդարտ ու խոկուն.

Ու լսէի ես այգուն
Սրտապատար ու տրոփուն
Գովքն իրիկուան եկուորին.
Ու դիտէի ես այգուն
Ու խոկայի օրն ի բուն
Երթն իրիկուան եկուորին...:

Հ. ՆԵՐՍԵՍ ՏԵՐ ՆԵՐՍԵՍԵԱՆ